## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-26/21-ԹԻՐԱԽՆԵՐ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **16 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 11-16-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում տեղի ունեցավ թիրախների ձեռքբերման թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-26/21-ԹԻՐԱԽՆԵՐ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Ֆարսյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ պետը, |
| Կ. Աբրահամյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը, |
| Է. Արաքսման-Մանուկյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը, |
| Մ. Մազմանյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը, |
| Ա. Գալստյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Ֆարսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Առաքելյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, ինչով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների և գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ կիրառելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ և ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 11-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում ժամը 15:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | թիրախներ | 96,000.00 |
| 2 | թիրախներ | 463,500.00 |
| 3 | թիրախներ | 76,000.00 |
| 4 | թիրախներ | 688,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | Նորք 2-րդ նրբ.32 տ. | +37496003377 | nararmprint@mail.ru | 00532505 |
| 2 | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Աճառյան 44/6 | +374 94 45 85 10 | lasprint01@gmail.com | 00429084 |
| 3 | Սեկո-Պրինտ ՍՊԸ | ք. Երևան, Բաբաջանյան 3/9 | +37494-68-70-69 | info@seko.am | 00910657 |
| 4 | Հայկ Իսրաելյան ԱՁ | Երևան, Զիվանու փ. 34 | +37493659658 | annitta_2014@bk.ru: | 78070916 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, ինչպես նաև արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

- «ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ով ներկայացված «Դիմում-հայտարարություն» փաստաթղթում բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:
- «Սեկո-Պրինտ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ով ներկայացված «Դիմում-հայտարարություն» փաստաթղթում բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Հայկ Իսրաելյան ԱՁ-ի կողմից Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկի փաստաթղթում 2-րդ չափաբաժնի մասով «Արժեք» (330,000/երեք հարյուր երեսուն հազար) և «ԱԱՀ» (36,000/երեսունվեց հազար) սյունակների հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» (396,000/երեք հարյուր իննսունվեց հազար) սյունակի տառերով և թվերով նշված գումարին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Չափաբաժնի անվանում | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները՝ Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | թիրախներ | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | 96,000.00 | 59,166.67 | 11,833.33 | 71,000.00 |
| | | Հայկ Իսրաելյան ԱՁ | | 62,500.00 | 12,500.00 | 75,000.00 |
| | | Սեկո-Պրինտ ՍՊԸ | | 65,000.00 | 13,000.00 | 78,000.00 |
| | | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | | 73,800.00 | 14,760.00 | 88,560.00 |
| 2 | թիրախներ | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | 463,500.00 | 153,000.00 | 30,600.00 | 183,600.00 |
| | | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | | 258,333.33 | 51,666.67 | 310,000.00 |
| | | Սեկո-Պրինտ ՍՊԸ | | 290,000.00 | 58,000.00 | 348,000.00 |
| | | Հայկ Իսրաելյան ԱՁ | | 330,000.00 | 36,000.00 | 396,000.00 |
| 3 | թիրախներ | Սեկո-Պրինտ ՍՊԸ | 76,000.00 | 45,000.00 | 9,000.00 | 54,000.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | | 49,166.67 | 9,833.33 | 59,000.00 |
| | | Հայկ Իսրաելյան ԱՁ | | 50,000.00 | 10,000.00 | 60,000.00 |
| | | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | | 52,000.00 | 10,400.00 | 62,400.00 |
| 4 | թիրախներ | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | 688,000.00 | 384,000.00 | 76,800.00 | 460,800.00 |
| | | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | | 457,500.00 | 91,500.00 | 549,000.00 |
| | | Սեկո-Պրինտ ՍՊԸ | | 495,000.00 | 99,000.00 | 594,000.00 |
| | | Հայկ Իսրաելյան ԱՁ | | 550,000.00 | 110,000.00 | 660,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 12-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Հայկ Իսրաելյան ԱՁ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:
3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 16-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 16-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-4-րդ | «ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ» ՍՊԸ | բավարար |
| 1-4-րդ | «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ | բավարար |
| 1-4-րդ | «Սեկո-Պրինտ» ՍՊԸ | բավարար |
| 1-ին, 3-4-րդ | Հայկ Իսրաելյան ԱՁ | բավարար |
| 2-րդ | Հայկ Իսրաելյան ԱՁ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 16-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | Մասնակցի | Ընտրված մասնակցի | Մասնակցի առաջարկած գինը |
|---|---|---|---|

| N | անվանումը | դեպքում նշվում է "X" | /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1 | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | X | 59,166.67 |
| | Հայկ Իսրաելյան ԱՁ | | 62,500.00 |
| | Սեկո-Պրինտ ՍՊԸ | | 65,000.00 |
| | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | | 73,800.00 |
| 2 | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | X | 153,000.00 |
| | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | | 258,333.33 |
| | Սեկո-Պրինտ ՍՊԸ | | 290,000.00 |
| 3 | Սեկո-Պրինտ ՍՊԸ | X | 45,000.00 |
| | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | | 49,166.67 |
| | Հայկ Իսրաելյան ԱՁ | | 50,000.00 |
| | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | | 52,000.00 |
| 4 | ՆԱՐԱՐՄՊՐԻՆՏ ՍՊԸ | X | 384,000.00 |
| | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | | 457,500.00 |
| | Սեկո-Պրինտ ՍՊԸ | | 495,000.00 |
| | Հայկ Իսրաելյան ԱՁ | | 550,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ. հունիսի 16-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Ֆարսյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Կ. Աբրահամյան ______________

Է. Արաքսման-Մանուկյան ______________

Մ. Մազմանյան ______________

Ա. Գալստյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ______________